

ճաշին մէջ ալ. կամ աւելի ճիշդ՝ այս հայ կանոնն է զոր նոյն պատմիչը «հարաւային» միանձանց բերանը կը դնէ: Մեր քահանայը հոն նախ կ'օրհնեն սեղանը, որով իրենց կոչնատէր մոզպետը «միաբանէր ընդ նոսա հացին օրհնութեան». եւ յետ աւարտման «յոտն կացին ի բազմականացն անդ, գոհանայիս» (132, '34). եւ կամ «յարուցեալ յընթրեացն՝ . . . կատարէիև զաղօթս» (Փրպ. 267): Կանգնումը սովորական էր արդէն ամէն ճաշերու աղօթից, ինչպէս տեսանք (աստ, 111): Իսկ աղօթից թիւը կ'աճի յետոյ վանքերու մէջ: Նարեկացին յեցած անշուշտ ժամանակակից սովորութեան մը, կը խրատէ՝ թէ «երևր անգամ օրհնեալ». եւ չգոհանալով՝ կը յարէ եւս՝ թէ հին ճգնաւորք «երկոտասան ծունր կրկնէին» ճաշէն յառաջ, եւ նոյնքան ալ վերջը (Կարգ աղ. 419), եւ որոց հետեւելու յորդոր մը կը թուի այս յուշարարութիւնը: Բայց երբեակ աղօթքն աւելի տարածուած էր եւ կը տեւէր տակաւին Տաթեւացւոյն օրով ալ, որ յետ ըսելու՝ թէ «կրկին օրհնեմք» ըստ ընդհանուր սովորութեան, կը յարէ թէ «ոմանք երևրկին օրհնեն, ի սկիզբն, ի մէջն եւ յետ կերակրոյն»: Կային «ոմանք» ալ՝ որ մարմնական ուրախութեան այս գործը կը